

ՄՇԱԿ

Տարեկան դիմել 10 րուբլ, կես տարվան 6 րուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից ամբողջատան մէջ:

Օտարապետացիք կիսում են ուղակի

Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով:

Ցայտարարութիւնների համար զմարում են

խրատանցիւր ըստին 2 կոպեկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՄՇԱԿ

ԱՄԵՆՈՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ 1882 ԹԻՒՆ

(Տ Ա Ս Ն Ե Ւ Մ Ե Կ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի)

Կը հրատարակի նոյն դիրքով և նոյն պրոգրամայով:
ՊՐՕԳՐԱՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիտօն կամ Բանասիրական, VIII. Ցայտարարութիւններ:
ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐԸ, 10 րուբլ է, կէս տարվան 6 ր., իւրաքանչիւ ամսին 1 րուբլ: Հատով համարները 5 կոպեկ:
Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցեով. Тифлис, редакция «Мшак»:
Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Եւրոպա եւ Հայաստան.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ կաղաւանից, Նամակ Սեփ-Ղա-րաքից, Ներքին լուրեր.—ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից, Արտաքին լուրեր, Խառն լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԵՐՈՊԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

«Մշակ» № 214 մէջ տպված «Գարձեալ մի ապացոյց» առաջնորդող յօդուածում խօսելով այն հիւանդութեան վրա, որ յայտնվեցաւ Թիւրքաց Հայաստանում, մենք աւելցնէք, որ եթէ քրիստոնէայ ազգաբնակչութիւնը թուով փոքրամասնութիւն էլ յայտնվէր Թիւրքաց Հայաստանում, դարձեալ քրիստոնէաներին պէտք է յանձնվէր երկրի ներքին կառավարութեան ղեկը և ներքին վարչական իշխանութիւնը պէտք է առնվէր մահմետականների ձեռքից, որոնք ամեն ահա, որտեղ ունեն պետական կազմակերպութիւն, ապացուցին, որ անընդունակ են պետական կեանքին:

Եւրոպան գուցէ կասի թէ Հայերը դեռ անպատրաստ են ինքնավարութեան: Իսկ Թիւրքիան, կամ մահմետական այլ երկիրները, որոնց եւրոպան ճանաչում է դարեւրով անկախ պետական կեանք վայելելու իրաւունքը, միթէ նրանք պատրաստ են այդ պետական կեանքին: Գարեբով նրանք պետութիւններ են կազմում և այդ դարեւրի ընթացքում ցոյց տուցին իրանց անընդունակութիւնը մաղի չափ առաջադիմութիւն անելու իրանց կեանքի մէջ: Ամբողջ Թիւրքիայում մի դպրոց չէր կայ որ տէրութիւնը հիմնած լինէր, ճանապարհներ չէր կան, գործարաններ չէր կան, ժողովուրդը մնում է վայրենի, աղէտ, աղքատ, անմաքուր, կեղտոտ կեանք վարող: Այդ է պատճառը որ մահմետական երկիրները աղբիւր են ամեն տեսակ թշուառութիւնների, սովի, ժանտախտի, խօշէրայի:

Ասենք թէ Հայերը Թիւրքիայում աղէտ են, վայրենի են, ինքնավարութեան համար անպատրաստ են: Բայց և իւրեքերը ապացուցին որ նոյնպէս ինքնիշխանութեան համար անպատրաստ են, դարեւրով վայելելով այդ ինքնիշխանութիւնը և որպէս հեռուեանք այդ անպատրաստութեան և ան-

բարեկարգութեան այս րօպէիս Թիւրքիան սպանում է տարածել ամբողջ լուսաւորված աշխարհում սարսափելի ախար:

Մինչև որ մի ժողովուրդ ճնշված է, ստորացրած է, ինչքան էլ ցեղական գեղեցիկ յատկութիւններ ունենար այդ ժողովուրդը, դժուար է ասել որ նա ընդունակ է, կամ ընդունակ չէ քաղաքակիրթ կեանքին: Բայց ապահովացրէք նրա կեանքը հաստատ օրէնքներով և կանօնաւոր ադմինիստրացիայով.—և կը տեսնէք արդեօք ունի նա ընդունակութիւններ քաղաքակիրթապէս զարգանալու:

Այդ երեւոյթը պատահել է և մեր երկրում: Երբ Ռուսաստանը նուաճել է Անդրկովկասը, Հայերը նոյնքան անզարգացած, ասենք վայրենի էին, որքան կովկասեան միւս ազգերը՝ Թուրքերը, պարսիկները, վրացիները և այլն... Բայց կարճ ժամանակում, վայելելով ռուսաց կառավարութեան կողմից առած նիւթական ապահովութիւնը, միջոց ունենալով նիւթապէս, տնտեսապէս, բարոյապէս և մտաւորապէս զարգանալու, կարճ ժամանակում, ստամ ենք, Հայերը, կովկասեան բոլոր միւս ազգերից առաջադէմ դարձան: Դա ամենալաւ ապացոյց է, որ ցեղով ընդունակ մի ազգութիւն երբ ստանում է ապահովութիւն և զարգանալու համեմատական, ազատութիւն, շատ շուտ առաջադիմութիւն է անում:

Ռուսաստանը նուաճելով Անդրկովկասը բոլոր նրա ազգերին հաւասար կերպով առաջարկեց քաղաքակիրթ վիճակ միջոցներ. ամենքին հաւասար կերպով բաց արւա իր թէ միջնակարգ, թէ բարձրագոյն դպրոցների դռները, ամենքին հաւասար կերպով միջոց տուեց պետական լիզուն ուսումնասիրելու և նրա միջոցով ծանօթանալու ռուս գրականութեան հետ, ամենքին հաւասար կերպով իրաւունք տուեց մտնել պետական թէ քաղաքական և թէ զինւորական ծառայութիւն, պարսպել արհեստներով, արուեստներով, գեղարուեստներով, առուտուրով, երկրագործութեամբ:

Եւ ահա կովկասեան բոլոր ազգերից Հայերը, իրանց բնական, ցեղական ընդուն-

ակութիւնների շնորհով, Հայերը, որոնք ռուսաց տիրապետութենից առաջ նոյնքան վայրենի դրութեան մէջ էին երեւում, որքան կովկասեան միւս ազգութիւնները, այժմ բոլորից առաջադէմ են կեանքի ամեն ճիւղերի մէջ:

Հայերը հարստացան, Հայերը լցրին գիմնազիաները և համալսարանները իրանց աշակերտներով, Հայերը բոլոր տեղական ազգերից ամենից լաւ տիրապետում են պետական լիզուն, Հայ բժշկները մրցում են ռուս և գերմանացի բժշկների հետ, Հայ ազգօկաւորները պակաս չեն ռուս փաստաբաններից, Հայ պրօֆէսորները մըլցում են Մոսկվայում, Օդեսայում, Բերլինում և Յիւրիխում օտար պրօֆէսորների հետ, Հայ զինուորականներ յայտնվում են կովկասեան ամենալաւ զինուորականներից, Հայ պաշտօնեաներ իրանց հասկացողութեան, պարտաճանաչութեան և ընդունակութեան կողմից պակաս չեն պետական միւս պաշտօնեաներից: Երկրի առուտուրը, ֆինանսական դործունէութիւնը Հայերի ձեռքում է, Հայոց դպրոցները պետական դպրոցներից յետոյ երկրի մէջ առաջին տեղն են բռնում: Ահա ինչ է նշանակում ցեղական յատկութիւններ: Բայց ո՞ր Թիւրք, կամ պարսիկ, կամ օս, կամ նոյն իսկ վրացի յայտնվեցաւ ընդունակ Բերլինի կամ Յիւրիխի, կամ Օդեսայի ամբիօններից գիտական դաստիարակութիւններ կարգաւոր: Մի Հայ գիւղացի, մի հասարակ լօռեցի Յիւրիխի համալսարանի պրօֆէսոր է, մի այլ Հայ հասարակ գիւղացի Թիֆլիսի մէջ փաստաբան է, մի երկրորդ բժիշկ է, չորրորդը նօտարիուս է և այլն և այլն: Կարճ ժամանակում Հայերը և հայուհիները ընդունակ յայտնվեցան և զեղարուեստների մէջ, երաժշտութեան, երգեցողութեան, նկարչութեան, մէջ:

Նոյնը կը պատահի եթէ Թիւրքաց Հայաստանին ինքնավարութիւն տրվի. չի անցնի քսան և հինգ, շատ շատ մի երեսուն տարի և Հայերը, որոնք այժմ Թիւրքերին և քրդերին, իրանց տղիտութեամբ և վայրենութեամբ հաւասար են երեւում, յանկարծ բոլոր շրջապատող ազգերից առաջադէմ կը յայտնվեն: Ահա ինչ է նշանակում ցեղական ընդունակութիւններ: Մեր երկիրը որ ռուսաց տիրապետութեան օրով յանկարծ ստացաւ աւելի լաւ կառավարութիւն, քան թէ պարսից ժամանակ, ստացաւ ապահովութիւն և մարդկային իրաւունքներ, ամենալաւ ապացոյց է այդ ճշմարտութեան: Երեւանեան Թուրքերը և պարսիկները մնացին նոյն անշարժ դրութեան մէջ, որի մէջ էին պարսից տիրապետութեան ժամանակ, իսկ նոյն նահանգի Հայերը առաջ գնացին:

Այդ ճշմարտութիւնը ամենից լաւ հասկացաւ հանգուցեալ և անմոռանալի Ալէքսանդր II կայսրը, երբ ամենից առաջ ինքնավարութիւն Թիւրքաց Հայաստանի համար, ապահովութիւն քրդեր և չերքէս աւազակների դէմ, ապահովութիւն կազմակերպված վարչութեան և դատարանե-

րի միջոցով տեղական պաշտօնեաների գեղ-ծունէների դէմ:

Ինչքան էլ մի ազգ ինքնօգնութեամբ պատրաստվի ինքնավարութեան համար, դժուար թէ նոյն հեռեանքներին, և նոյնքան կարճ միջոցում կարողանայ հասնել ցանկացած նպատակին, մինչև որ վարչական ապահովութիւն չունենայ:

Իսկ եթէ Եւրոպան կասի Թիւրքաց Հայերին. «դուք պատրաստ չէք ինքնավարութեան», այդ փոռած մաքին կարելի է միայն այն պատասխանել թէ մի ազգ, որ իրաւունք չեն տալիս պատրաստվելու, երբեք ոչ մի բանին պատրաստ չի լինի, մի ազգ որ սարսափելի ճնշման տակ է, միշտ անպատրաստ կը մնայ: Ոչ մի ազգ ոչ մի բանին երբեք պատրաստ չէ. պատրաստվելու համար պէտք է իրաւունք ունենալ վարժվելու պատրաստութեան մէջ: Ստրկութեան մէջ չէ կարելի սովորել ազատութիւնը, ինչպէս չէ կարելի սովորել լողալ երբեք ջրում չը մտած, սովորել մանգալ երբեք չը ման եկած, սովորել երգել առանց փորձելու ձայն հանել, թէ կուզ սկզբից այդ հանած ձայները կը լինեն անախորժ և աններդաշնակ:

Եթէ երեւանեան Հայերը մինչև այժմ մնային պարսից տիրապետութեան տակ, նրանք մինչև այժմ էլ կը նմանվէին Դավթի անշարժ հայերին, իսկ երկարվելով աւելի բարեկարգ կառավարչութեանը, նրանք այժմ ամեն բանին ընդունակ դարձան:

Իսկ եթէ Եւրոպան կարծում է թէ Թիւրքաց Հայերը անընդունակ են վարչական ինքնավարութեան, ի՞նչ պէտք է ասի նա նոյն իսկ Թիւրքիայի վրա, որ այսքան դարեւր անկախ պետութիւն է կազմում և նոյն իսկ այսօր դեռ ևս այնքան անբարեկարգ է որ այս րօպէիս էլ փտանգ է ներկայացնում ամբողջ լուսաւորված աշխարհի համար, զանազան ցաւերի բուռ լինելով:

Թող չը մոռանան այն միտքը որ մենք միշտ յայտնել ենք. կան ցեղեր, որոնք ընդունակ են զարգացման, բայց կան և այլն պիսիներ, որոնք անընդունակ են քաղաքակրթութեան, մինչև որ չենթարկվին ուրիշ ցեղերի իշխանութեանը, մինչև չը խառնվին նրանց հետ ու չը կերպարանափոխվին:

Հայոց ցեղը ապացուցել է որ բարեկարգ դրութեան, աջող հանգամանքների մէջ դրված լինելով, նա ընդունակ է կուլտուրական կեանքին, իսկ Թիւրքը ցեղը, ընդհակառակն, ապացուցել է, որ ինչքան էլ անկախութիւն վայելի, նա անընդունակ է քաղաքակիրթ կեանքին, առաջադիմութեանը և միշտ անշարժ է մնում մինչև որ զեկավարված չը լինի մի աւելի ընդունակ ցեղի ձեռքով, մինչև որ այդ ցեղը չը խառնվի մի այլ ցեղի հետ խառն պատկերի միջոցով:

Մարդկութեան համար ո՞րն է աւելի շահաւէտ և օգտաւէտ որ ընդունակ, թէ անընդունակ ցեղերը առաջնակարգ դեր խաղան այս կամ այն երկրի մէջ:

Անընդունակ ցեղերի տիրապետութիւնը

արուեստական կերպով պահպանելով Եւրոպան ինչ հետեւանք է ստանում. խոսքով թիւներ, ձեռնում, ֆանատիկոսութիւն, անկարգութիւններ, աւազակութիւն, խօլերա և ժանտախտ:

Այդ հետեւանքները դեռ շատ անգամ իրանց զգալ կը տան լուսաւորութեան Եւրոպային:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԿԱԶՈՒՄՆԵՑ

Նոյեմբերի 8-ին

Կաղզուանք, որ ընկած է Եւրասիոյ հարաւային կողմը, Մամաքար լեռան հիւսիսային կողմը՝ այդ Մամաքար լեռը սահման է ուստաց և տաճկաց, դորա հարաւային կողմն է ընկնում Ալաշկերտը, յիշեալ լեռը շարունակութիւն է Բէօսա-դաղ լեռներին, որոնք զէպի արևմտահարաւային կողմն են, իսկ Մամաքարը շարունակութեամբ է արևելահարաւային կողմն և միանում է Սեպան լեռան հետ: Մամաքար լեռից դէպի հիւսիս Կաղզուանի արևելեան կողմը ձգված է մի ձոր նոյն լեռան անունով (Մամաձոր): Կաղզուանը ընկնելով Եւրասիոյ, Մամաքար լեռան և Մամաձորի մէջ տեղ մի փոքրիկ փոս է, որտեղ են՝ քաղաքը, այգիները և դաշտերը: Քաղաքը շատ մօտ է Մամաքար լեռան ստորոտին, որ բոլորովին նմանութիւն չունի քաղաքի, կարելի է ասել գիւղաքաղաք: Այժմ բնիկ հայ բնակիչ կայ երկու հարիւր տուն, իսկ օտարականը, որոնք վերջին պատերազմից յետոյ եկած են, տներ և այգիներ են առած, կը լինեն հարիւր տուն: Օտարականը գլխաւորապէս են՝ ալեքսանդրապոլցի, թիթլիսցի և հին բայազէդներ: Թէպէտ առաջ եղել են այստեղ հինգ հարիւր տուն տաճկներ, բայց այս վերջին ժամանակներու համարեա բոլորը գաղթել են և մնացողները ևս մինչև մարտ ամիս բոլորովին կը գնան:

Տեղի բնիկ ժողովուրդը ըստ կարողութեան կարելի է երկու կարգ բաժանել, իսկ պարագայնց նայելով կարելի է մի ասել, որովհետև հարուստներն էլ ունին նա հարուստ է, պատճառ որ նա քարվան ունի: Այդտեղի բնակիչները իւրաքանչիւրը երկու ձեռք տուն ունեն, մի ձեռքը քաղաքում, միւսը այգիում. երբ որ գարունը սկսվում է, մայիս ամսից նրանք ընտանիքով քոչում են այգիները, այնուհետև քաղաքում կաղզուանցի չէ՛ք կարող տեսնել:

Գարունից սկսած խեղճ կաղզուանցիներ իր էջերը առաջ գցած թէ հարուստ, թէ աղքատ, շաբաթը երեք անգամ գնում է Ղարս իր այգիի թաց մրգերը ծախելու. իսկ այգիում իր ընտանիքը, երեխայքը, ծերը և պառաւը աշխատում են, ժողովում են, բեռները կապում են մինչև տան տաղամարդը երրորդ օրը դալ Ղարսից, և դեռ մի զինչը չը հանգստացած՝ վերադառնում է դարձեալ Ղարս: Այսպէս տանջվելով աշխատում են մինչև հոկտեմբեր ամիսը. իսկ հոկտեմբերին և նոյեմբերին նրանք սկսում են իրանց առևտուրը փոխել գիւղացիների հետ, չորացած միրգեր են տանում գիւղերը և բերում են իրենց տան համար ձմեռվայ պաշար՝ ցորեն, իւղ, պանիր, աճար, բրինձ և այլն... և այլն...

Իսկ վարելահողերը ձմեռն են. վարելահողերը տաճկների ձեռքն են եղել, իսկ հիւսիսային թէ գաղթել են, այդ հողերը ծախել են հարուստների վրա, բայց այս ևս պէտք է ասած, որ սրանց վարելահողերը բաւականացուցիչ չեն բնակիչներին:

Կալով վաճառականներին այսպիսի կասեմ, որ տեղիս վաճառականները, արհեստագործները բոլորն էլ օտարներն են: Ուրեմն ասն համառօտապէս նկատագրելով տեղիս ժողովրդեան դրութիւնը, այժմ մի փոքրիկ կարծիք ևս հարկաւոր է յայտնել նրանց մտաւոր դարգացման մասին:

Արդեօք սրանք կարող են պահել կանոնաւոր ուսումնարան, ինչպէս Ռուսաստանի ուրիշ գիւղերում և քաղաքներում. կարող են սրանք հասարակութեան օգտակար մասերի վրա մտածել, կարող են ուսումնարանի, եկեղեցու և այլ ընդհանրութեան վրա մտածել: Նոյ, իմ կարծիքով, կը պատասխանեմ վերոյիշեալ հարցերին, ոչ. կաղզուանցիք երբեք չեն կարող հասարակութեան

վերաբերեալ մասերի վրա մտածել այն պատճառով, որ սրանք յունիս ամսից սկսած մինչև դեկտեմբեր ամիսը չարչարվելով հազիւ իրանց տարեկան պիտոյքներն են հոգում և, եթէ կարելի է ասել, ամիսներով դրացին դրացու երես չէ տեսնում, հետեւաբար ինչպէս որ մարմնով հեռու են իրարից, ևս առաւել հոգում, որովհետև խեղճները ամբողջ տարուայ մէջ ժամանակ չեն կարողանում գտնել, որ իրանց հոգոյց ցանկութիւնները իրարու հաղորդեն. իսկ սիրելի ընթերցողս կառաւարդի ինձ թէ, թող ձմեռը մտածեն դրա մասին: Բայց ես կը պատասխանեմ, գիտե՛ք ինչ կայ, սիրելի ընթերցող, նրանք գեղեցիկութիւնները իրանց մեծի պահոց օրերը հազիւ կարողանում են աչք բացանել խմելուց և իրանց հարսանիքներից, իսկ մեծի պահոց օրերը սկսվում են թէ չէ, դարձեալ սկսում են իրանց աշխատութիւնները: Ուրեմն պարզ երևաց, որ մի օր ևս աղաւտ ժամանակ չը կարողացաւ գտնել կաղզուանցին, որ մտածէ ընդհանրութեան ուսումնարանի և եկեղեցու վրա: Ուստի խնդրում ենք ուսումնարանների թեմական տեսչից, որ բոլորովին մի առանձին ծրագիր կազմէ կաղզուանի ուսումնարանի համար, որովհետև այս քաղաքի վարչութիւնը բոլորովին բացառութիւն է, ուրեմն ընդհանուր ուսումնարանաց կանոնի տակ չէ կարող մտնել: Անհ երրորդ ամիսն է երկու ուսուցիչ ունեն և ամսական երկուսին եօթնամսուն լուրջ վարձ են վճարում, բայց ուսումնարան գեռ ևս մի աշակերտ չէ մտել, ուսուցիչները քոչողազ փողոցներն են չափում. բայց ի հարկէ ուսուցիչները մեղաւորութիւն չունեն, թող պարոն թեմական տեսչը ուղ դարձնէ ուսուցչաց վրա: Մինչդեռ ուրիշ տեղեր ուսուցչի սով է, իսկ կաղզուանում առատութիւն, որովհետև տարին երկու ուսուցիչ ճանապարհ են ձեռնում, իսկ ուսումնարանի աշակերտներից տարեկան տասը համալսարան են ուղարկվում:

Օտար քաղաքացիներից տասը տուն հազիւ բարի ժառանգներ լինեն. իսկ մնացածը որ քաղաքում որ չար գաւառներ կան, փախել են կաղզուան, բոլորը կապից փախած են. խնդրում ենք ճշմարիտ և պատուելի վաճառականներին, որ մի գուցէ ցանկութիւն ունենան դիմելու կաղզուան, որովհետև կաղզուանը ոչինչ չէ, եթէ ոչ Հայաստանի Սիբիր:

Պարոն թեմական տեսչից խնդրում ենք շուտով բարեկարգէ ուսումնարանը, որպէս զի ժողովրդի բարի գաւառներն էլ չը խառնվեն այն օտար չար գաւառների հետ:

Ճանապարհորդ

ՆԱՄԱԿ ՄԵՏ-ՂԱՐԱՔԻԼԻՍԻՑ

Նոյեմբերի 13-ին

Եկովս անյայտացաւ. եզս կորաւ. ոչնչարս կերան. դադս մորթեցին. մողիս գողացան. գերանս տարան. դուքանս թաղանցին... և այլ և այլ այսպիսի հաղորատու որոտունջներ շատ յաճախ կրկնվում են Ղարաքիլիսում: Բայց երբ հետախուզում են այդ գողացած ապրանքների ետևից, դադը՝ հայ դրացու հարիւս՝ միջից է դուրս գալիս, գերանները՝ հայ դրացու տանիքի վրա են գտնվում, ոչնչարս միտը՝ հայի տանն է բռնվում, գողացած քարերը՝ հայի տան պատի ճակատին են փայլում, և այլն և այլն: Սրանով են երբեք չեմ կամենում բոլոր զարաքիլիսցիներին պատիւ արտաբերել գողութեան մէջ, ոչ. այդ պիտի յանցանք ես չեմ վստահանալ գողութեւ: Միայն Ղարաքիլիսում, որպէս ցեց, բուն են դրել մի քանի անամթներ, որոնց ստամոքսը սովոր է միայն մարսելու գողացած այծեր, զրացու մողիներ ու եղներ...

Եթէ երբեմն երեւմն գողութեան մէջ մեղադրվում են կաղախներ էլ, հաւատացե՛ք, սիրելի զարաքիլիսցիք, որ դարձեալ յիշեալ չաթուքեաններին մարը մէջն է: Առանց տանու աւազակների օգնութեան, եթէ մի օտար մարդ մտնում է ձեր տունը, դա հաղուազիւտ բացառութիւն պէտք է համարել: Կոչող միշտ տանից է լինում, որ անագին եղը երթիկը են տանում:

Այժմ հարցը սրանումն է թէ, երբ Ղարաքիլիսի իշխանները իրանց բարի աչքով պոլիցիայի ու դատաւորի ներկայութեան գողացած ապրանքները ամենաօրաւոր փաստերով որ ապացուցանում են այս և այն դրացու վրա, հանելով նրա տանից դադի մի սը, ոչ իրարի զառուրմէն,

զողացած դերանները... ինչ են անում այդպիսի անբերս ու լիբր գողերին: Ոչինչ չեն անում մեր մարդասէր և բարեխիղճ իշխանները: Բան չը կայ, գործն քարն է առել. երկու գերան է գողացել, թող չորսը վճարէ. մի ոչնարէ կերել, թող երկու ոչնար տայ... ասում են մեր բարեխիղճները և անյայտնի գողին դարձեալ և դարձեալ ներում: Այժմ հարցնում ենք. այսպիսի թեթեւ նախատական խօսքերով կարելի է ապականված գողին խրատել և կամ գողութիւնը արմատախիլ անել գիւղից: Մարդասիրութիւնն էլ, զիջողութիւնն էլ իր չափն ու սահմանն ունի: Այդպիսի շուայ մարդասիրական զիջողութեամբ, ինչպէս ապացուցանում են, գողին աւելի վարժեցնում ենք իր ապականված արհեստի մէջ և, որ վտանգաւորն է, ուրիշներին էլ հրապուրում ենք դէպի այդ կորստաբեր ճանապարհը: Վերջապէս այդպիսի վնասակար զիջողութեանց հետեւանքն այն կը լինի, որ զարաքիլիսցիք, մի քանի տարուց յետոյ, երկու գողութիւնով, կունենան մի քանի գողեր: Թող խրատ լինի մեզ համար Համալիւն, որի բնակիչները, մէկը միւսից չար օրինակ առնելով, այսօր շատ քչերը ազատ են զողոյ անունը կրելուց: Ով Համալիւնի միջից անցկենայ, երկու աչքի փոխանակ տասն աչք պէտք է ունենայ, որ կարողանայ չսող սալամաթ՝ դուրս գալ գիւղից: Իսկ եթէ գիշերը այդտեղ իշխանաց ու ոչինչ չը կորցրեց, կատարեալ հրաշք պէտք է համարել: Ե՛հ, թողնենք այդ ապականված գիւղը:

Օտարականը առաջին անգամ Ղարաքիլիս մտնելիս, դեռ երկու երեք վերստ հեռաւորութիւնից կը նկատէ գիւղի վերին ծայրում մի եռաբլուր կամ վիթխարի շինութիւն, որազմաթիւ բայց լուսամուտներով ու դռներով: «Վրդեօք դա պալատ է, մարկոնց է, նշանաւոր հարուստի ապարանք է»... հարց ու խնդիր կան ինքն իրան հետաքրքրված օտարականը, որ մտնելով այդ փառաւոր շինութեան մէջ, կը գարնանայ, տեսնելով նրա երեք յարկերի մէջ բազմաթիւ սենեակներ ու բաժանմունքներ: «Այ՛, հարուստ իշխանի դահլիճն է, սա՛ ընդունարանն է, սա՛ առանձնասենեակն է, սա ննջարանն է, սա՛ սեղանատունն է»... Ենթադրում է ինքն իրան օտարականը, «բայց սա ինչ է, սա, սա, սա»... կրկին հարցնում է հետաքրքիր մարդը: Վերջապէս օտարականը այդ հոյաւ կապ շինութեան բոլոր ծակ ու ծովը շրջելով դուրս է գալիս այդտեղից հետեւալ հառաչանքով, «ախ, ախտո՛ւ որ աւերակ ես, ողորմելի շինութիւն»:

Հետաքրքիր ընթերցող, այս եռաբլուրի բարձրադաճած շինութիւնը մի անուանի հարուստի (Չուբայովի) արաղի գործարանն է եղել: Իսկ վերին յարկը նրա զարդարուն բնակարանն էր: Պ. Չուբայովը դուրս հանելով գործարանի միջից իր կարասիները և գործարանի բոլոր իրեղէնները, դատարկ պատերը շինած պատարաստի, կարծեմ 71 թէին, 5 հարկի բուրձիլով ծախում է տեղիս դպրոցի վրա: Դա մի բաղդ էր, որ 10 հազար ռուբլու շինութիւնը 5 հարկի բուրձիլ կարողանում է առնել հեռաւոր հազարաքուքութիւնը: Հէնց այս բուրձիլ այս շինութիւնը, իր առջև գտնված դատարկ գետինով, դարձեալ 10 հազար ռուբլի արժէ: Բայց անհոգութեան երեսից այդ շինութիւնը իր գերեզմանին է մօտեցնում: Անգուցէ և անխիղճ մարդիկ առանց ամաշխելու գողանում անդադար տանում են պատի քարերն և վրէն ամրացրած գերանները: Այսպէս շարունակվելով, մի 5 տարուց յետոյ, այդ փառաւոր շինութեան հետքն էլ չի երևայ և զբարբոյց 5 հարկի բուրձիլն էլ դուր կը կորչի: Հարց. կարելի է վերանորոգել:

Եթէ իւրաքանչիւր տուն ձրի բերի 5 սայլ քար, վճարի երկու փայտ և մի մշակ ուղարկի չորս օր բանելու և այս բոլոր ձրի օգնութեան հետ եթէ հոգաբարձութիւնը ծախսէ 5 հազար ռուբլի, այն ժամանակ այդ փառաւոր շինութիւնը կարծեալ մինչև 20 հազար ռուբլի և իր մէջ կը տեղաւորէ երկուսը դպրոցները, մի թատրոնական համեստ բեմ և դեռ մի քանի սենեակ էլ վարձով կը տրվի, որից կարելի է եկամուտ ստանալ գոնէ 500 ռ. տարեկան: Իսկ ձրի դպրոցը կամ կը ծախվի գոնէ 5 հազար ռուբլի:

Ղարաքիլիսում այնպիսի իւղալի հարուստներ կան, որոնք ոչ թէ երկու գերան, այլ եթէ ցան-

կանան 20 գերան էլ կը տան: Բայց ինչ եմ ասում: Ղարաքիլիսի նշանաւոր հարուստներից մէկն էլ Աբդոնց Գովանդեան է, որ 40 հազար ռուբլի բանկումն ունի, տարեկան մի 4 հազար ռուբլ էլ ուրիշ զուտ եկամուտ ունի, բայց այդ հայ կրեստը, հաստատ գիտեմ, որ ոչ միայն երկու մարդակ չի տայ, այլ շատ ուրախ կը լինի, եթէ այդ շինութիւնը քանդեն և մի քանի քար էլ իր տունը ուղարկեն: Բայց մնացեալ հարուստները չեմ կասկածում, որ իրանց արժանաւոր չափով կօզնեն: Բայց օգտաւէտ է այժմ այդ հարցը զարթեցնել, թէ ոչ Նս կարծում եմ որ օգտաւէտ է և գործը իր նպատակին կը հասնի, եթէ փորձող լինի Նս մինչև անգամ համոզված եմ, որ կայ մի հայրենասէր և բարեսիրտ անձն, որ թէև Ղարաքիլիսից հեռու է, բայց սրտով կապված է իր նախկին դրացիների հետ, ինչպէս ցոյց են տալիս նրա անգաւորական գործերը: Հէնց որ սկսվեց այդ շինութեան վերանորոգութիւնը, յիշեալ անձն դարձեալ չը պիտի խնայէ իր օգնութիւնը իր հայրենակիցներին:

Թող ժողով կազմեն, չափեն, ձեն, խորհեն, եթէ անհնար է, դարձեալ մի քանի ժամանակ էլ համարեն:

Երէկ դարձեալ երկու գերան գողացել տարել էին այս շինութիւնից: Այդ գողութիւնը պատճառ եղաւ, որ այս քանի խօսքը նուիրեցինք այդ աւերակներին:

Ինձ շատ լաւ յայտնի է որ «Մշակը» մինչև կոկորդը խրված է զանազան տեսակ նիւթերի մէջ. հարկաւոր է կամ կարճ գրել կամ լուրի ձեռով դուրս բերել, բայց այսպիսի բաները լուրի ձեռով գրելով ոչինչ դուրս չէ գալիս: Բոլորովին լուրով և ոչինչ չը գրելով էլ մեր ցաւերը բարդվում են միմեանց վրա և վատ հետեւանքներ առաջացնում:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ յանձնեցինք պ. Գիւրգենյանի մեր խմբագրութեան մէջ եղած փողերը, որոնք գոյացան նրա ֆոտոգրաֆիական ժողովածուի ծախելուց, իսկ այսօր ստացանք Աստրախանից, պ. Կարապետ Դաւթեանից 20 ռուբլ նոյն ժողովածուի մի օրինակի համար:

Աստրախանից պ. Կ. Դաւթեանից ստացանք 3 ռուբլ «Ժուրնալ դ'Օրիանի» բաժանորդագին: Առաջվայ փողերի հետ կանի 817 ռուբլ:

Համալսարանը այս րօպէս, ինչպէս մեզ գրում են, բաժանված է երկու կուսակցութիւնների, որոնք կազմվել են դպրոցի մասին եղած երկպառակութիւնների պատճառով. իսկ դպրոցը մինչև հիմա էլ բացված չէ: Մի կուսակցութիւն միւսի բերած վարժապետին չէ ուղղւում և ընդհակառակն: Այդ բոլոր խռովութիւնների պատճառը, ինչպէս հաւատացնում են, մի անձն է, որ ինքն է կամենում վարժապետ դառնալ:

Աստրախանից ստացանք 137 ռուբլ պ. Բաֆֆին յանձնելու համար:

Կովկասեան պատիւօրացոյցի հրատարակող պ. Կոնդրատեան ուղարկել է մեր խմբագրութեանը իր այդ օրացոյցի մի օրինակ: Այս տարի, պէտք է խոստովանվել, օրացոյցը աւելի մեծ խնամքով է հրատարակված, քան թէ առաջվայ ժամանակներում: Նա հարստացրած է հայոց և մասնատական տօների աւելի հարուստ ցուցակով, նոյնպէս լիջված են օրացոյցի մէջ նշանաւոր անցքեր Կովկասեան պատմութենից: Երեւում է թէ հրատարակողը մեծ աշխատանք է գործ դրել այդ օրացոյցը կազմելու համար: Տիպը շատ մաքուր է նոյնպէս:

Այս օրերս կը հրատարակենք «Մշակի» մէջ մեր այն բոլոր բաժանորդներին անուններն ու ազգանունները, որոնք անցեալ թէ այս տարի, զրկելով մեր լրագրին չեն վճարել իրանց բաժանորդագինը:

Երբ պատմում են որ գաւառներում չրջում են քահանաներ և արեղաներ, Հայաստանի սովեակների անունով փողեր ժողովելով հայոց հասարակութեան մէջ և հաւատացնելով ժողովրդին

որ դրա համար կոնգրակ ստացած ունեն իշխան-
ները, ճշգրտելով մէջ անուանում են Շուշու
գործակալ քահանայ տէր Մէլքիսեդէկ:

Շնորհակալութեամբ ստացանք պ. Մինաս Զե-
րազից նրա հեղինակութեան «Գրիչ և Սուր»
գրքովի առաջին հատորը, Տպում է Կ. Պոլսում,
Արամեան տպագրութիւն, ներկայ 1881 թվին:
Այս գրքի մասին, նրան կարգաւոր յետոյ, կաշ-
խատենք յայտնել մեր կարծիքը:

Ստացանք բազմաթիւ նամակներ թիֆլիսի
քաղաքային փոստով, որոնց մէջ «Մշակի» ըն-
թերցողներին և առհասարակ թիֆլիսի հայ երի-
տասարդներին շատերը մեզ շնորհակալութիւն
են յայտնում «Կարծես մի ապացոյց» առաջ-
նորդող յոգուածի համար, որ տպւեցաւ «Մշակի»
№ 214 մէջ:

Ծախցնել մի հատ պ. Բիւրքանի ֆոտո-
գրաֆիական ժողովածուի աշտարակեցի պ. Բար-
դուղիմէոս Սուքիասեանի վրա և ստացանք նրա-
նից 20 բուլետ:

Կ. Պոլսից մեզ գրում են որ Լօնդոնում հիմն-
վում է մի նոր ֆրանսերէն—անգլերէն լրագիր
«Gazette Orientale» անունով պ. Fermain-ի
խմբագրութեամբ, որ յանձն է առել ջերմ կեր-
պով պաշտպանել հայոց հարցը: Մեր թղթակցը
հաղորդում է մեզ և հետեւաւ «Ճշգրտելով»
խմբագրող, որ Սայիդ-փաշան «Մշակի» ամեն հա-
մարները թարգմանել է տալիս իր մի հայ քա-
տուղարի ձեռքով: Այդ բանը մեզ հարկաւոր էր
խմանալ, որովհետեւ մենք նորին գերազանցու-
թեանը շատ բան ունենք համակցանելու:

Մեր թղթակցը Կ. Պոլսից գրում է մեզ և հե-
տեւաւ «Հայաստանի համար նշանակելի նոր
հայ պաշտօնականների ցուցակը արդէն կազմված
պատրաստ է և կը հրատարակվի այս օրերս,
բայց, ասում են, այստեղի հայ հասարակութիւ-
նը շատ վստահութիւն չունի այս ընտրութիւն-
ների վրա:»

ԲԱՌԹԻՄԻՑ մեզ գրում են: «Այս օրերս Կով-
կասեան հոսումնարանական վիճակի հոգաբար-
ձու պ. Եանուկիայի այցելեց մեր Բաթումի երկ-
սեռ հայոց դպրոցը և շատ գոհ մնաց աշակերտ-
ների պատասխաններից և առհասարակ դպրո-
ցից: Նորին գերազանցութիւնը դպրոցից դուրս
գալուց առաջ արտասանեց հրապարակապէս
հետեւեալ խօսքերը: Հայրեր, սանց նա, միակ
ազգ են Կովկասում, որ ամեն մի այսպիսի
փոքրիկ քաղաքում, չը նայելով նրա թափան պա-
կասութեան, շատ լաւ հետեւում են իրանց դա-
ւակների ուսում տալուն:»

Թիֆլիսի Հաւաքար անունով թաղի ժո-
ղովրդի մէջ վերջին երկու, երեք տարիներում
զգալի է շարժողութիւն դէպք լաւ: Ընթերցա-
սիրութիւնը հետզհետէ տարածվում է Երեւոյ տա-
րի առաջ յայտնել չորս թէ հինգ հոգի կար լը-
րագիր կարգաւորող, այն ինչ այժմ «Մշակի» թէ
հատով աւանդների և թէ ստացողների թիւը
հասնում է 22-ի և «Մեղուկներ» 6-ի:

Մեզ գրում են Կարինից: «Այստեղ պ. Սանա-
սարեանի հաշուով բացվելի բարձրագոյն դպրոցի
հիմնվելուն շատ սպասելուց յոգնեցանք: Չմեն
էլ մօտեցաւ, բայց ոչինչ խօսք զեռ չը կայ
դպրոցի բացվելու մասին:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻՍՏԻՑ
Կ. Պոլս, 6 նոյեմբերի

Յաւալի է և մի և նոյն ժամանակ մեր գործին
շատ փաստաբեր, որ հայկական հարցին վերաբե-
րեալ շատ կարեւոր և էական կէտերը մինչև հի-
մայ ևս մնացած են մօթ և չը պարզված հայ
հասարակութեան համար, այսպիսի հիմնական
կէտերից զխառնող Հայաստանի ինքնավարու-
թեան խնդրի էութեան չը պարզվել է ամեն
իւր հարկաւոր է: Պէտք է հայոց հարցը ծագելու
օրից ի վեր դուզել հազար հատ յօդուած գրված
լինեն հայոց հարցին վերաբերող թէ հայ և թէ
օտար լրագիրների մէջ, և անցաւ բոլորի էութիւ-
նը կայացած է եղել նորաւում թէ առանց ա-

ռանձին քաղաքական արտօնութիւնների թիւ-
քաց-Հայաստանի համար, ինքնավարութեան կամ
այլ քաղաքական մենաշնորհութեան ձեռով, չէ
կարելի յուսալ որ և է հասարակային կամ ան-
հատական բարեօրոյթ թիւրքահայոց վիճակի
մէջ, որ և է անհնական և ընդից ապահովու-
թիւն, որ և է պատու և իրաւունք երաշխաւո-
րութիւն և այլն: Այնպէս որ, որ և իցէ տեսե-
ական կամ այլ գործառնութեանց յատկապէս
առաջարկվել և գործադրվել: որ և իցէ ազգո-
գուտ ձեռնարկների հրապարակ հանվել և յա-
ջողվել մինչև հիմա ևս շատերը պայմանաւոր-
ված են համարում միայն և եթ այդ ինքնա-
վարութեան, այդ առանձին քաղաքական մե-
նաշնորհութիւնների ներմուծութեամբ: «Ինչ-
պէս կարելի է մի բան անել Հայաստանի մէջ,
երբ այնպիսի զեղծումներ կան թիւրքաց դա-
տաստանական մասի մէջ, ինչպէս կարելի է մը-
տածել որ և իցէ արդիւնաւոր գործի ձեռնար-
կութեան վրա, երբ քիւրդերը և չէրքէզները
չեն թողնում մարդուն աչք բաց անել, երբ
թիւրք և քիւրդ ըէյերը յափշտակում են, թա-
ւանում և ամեն տեսակ հարստահարութիւններ
անուծ և այլն և այլն: Այս տեսակ բաներ այն-
չափ թափած են, և դեռ շարունակում ենք
թափել մենք ինքներս օտար լրագիրների էջերը,
նոքա այնչափ յայտնի են իւրաքանչիւր հային,
որ վերոյիշեալ բողոքների պէս բողոքներ էլ ա-
ւելորդ են:

Բայց ամեն գործի մէջ միակողմանի լինելը
դատապարտելի է, մասնաւոր ևս այնպիսի հար-
ցի մէջ, որը կարօտ է բազմակողմանի և ամե-
նաճիւղ ուսումնասիրութեան: «Ինքնավարու-
թիւն» և քաղաքական իրաւունքներ» աղաղա-
կելու հետ միտեղ, հարկաւոր է անշուշտ, որ
մենք քննենք ևս այն միջոցները, որոնցով կա-
րելի է ստանալ այդ ինքնավարութիւնը և քա-
ղաքական իրաւունքները ուրիշ կերպ, քան թէ
աղաչանքներով դիմելով թիւրքային, Անգլիա-
յին կամ մի այլ պետութեան: Կան պայման-
ներ և կէտեր, որոնք մինչև հիմայ բոլորու-
մին զանցառութեան և մոռացութեան մէջ են
մնացել այն բոլոր ինքնակոչ քաղաքագետ»
խմբագիրների կողմից, որոնք շարունակ երեք-
չորս առաջնորդող յօդուածներով հայոց հարցի
վրա պոռոտաստեղծուց յետ, իրանց պարտա-
ւորութիւնը կատարած են համարում և Հայաս-
տանի ապագայի գործը «երաշխաւորված...» Հի-
մայ բացատրենք մեր ասածները:

Յայտնի է, որ Բարձր Հայաստանը և Փոքր
Հայաստանը ենթարկված են մի և նոյն թիւր-
քական օրէնքներին: Յայտնի է, որ չէրքէզները,
թիւրքմենները և ափշարները Փոքր Հայաստանի
մէջ աւելի ևս կատարել են և բազմաթիւ, քան
թէ հայաստանը քիւրդերը վանի, Մուշի,
Կիւրքէքիւրի և Երզրումի վիլայէթներում: Յայ-
տնի է ևս որ Փոքր Հայաստանի հայերի բնակու-
թիւնը և թիւը ուրիշ բարբարոս ազգաբնակու-
թեան հետ համեմատելով ոչ աւելի զօրեղ է,
քան թէ Բարձր Հայաստանի հայերին: Բայց
ինչից է առաջ գալի այսպիսի մի մեծ և անհա-
մեմատ տարբերութիւն այդ երկու կողմի հայ
ազգաբնակչութեան վիճակի մէջ: Ինչպէս հարցն
է, որի պարզելը նոյնչափ հարկաւոր է մեր ա-
նելիք գործերի կարեւորութիւնը գնահատելու
համար, որչափ և Հայաստանին տալիք ինքնա-
վարութեան պատրաստութիւնը հասկանալու հա-
մար:

Բայց ինչի մէջ է կայանում Բարձր ու Փոքր
Հայաստանի հայերի դրութեանց մէջ եղած դա-
նազանութիւնը, պիտի հարցնենք: Մեծ կամ Բարձր
Հայաստանի հայերի բոլոր ցաւը նորա մէջ է
կայանում, որ այդ երկրի մէջ զրկվել ոչ մի հայ
հակազգողութիւն չունի թէ ինչ ասել է անհա-
տակաւ և հասարակային իրաւունք, թէ
ինչ օրէնքներ է դրած թիւրքիւն այդ իրա-
ւունքների պաշտպանութեան համար և թէ ինչ-
պէս կարելի է օգուտ քաղել այդ իրաւունքնե-
րից: Ահա այն ամենատարբարական տեղեկութեանց
տեղեկութիւնը, որից օգուտ քաղելով մի կողմից
հայ վախճառները, միւս կողմից ըէյերը և նոյն
խիւ թիւրք դատաւորները և կառավարիչները,
Մեծ Հայաստանի ազգաբնակչութիւնը կրնում են
այն կերպ ինչպէս մենք լսում ենք և տեսնում
ամեն օր: Գնացե՛ք Կ. Պոլսի պատրիարքարան և
քրքրեցե՛ք ամեն օր իկող բազմաթիւ գնաւոր-
ները, խստութեանց և հարստահարութեանց բո-
ղոքները, յուսահատութեանց և դաւաճութեանց
ճիւղերը, կը տեսնե՛ք, որ այդ ամենը գալիս են

միայն և եթ Մեծ Հայաստանից, ինչպէս—ո-
րովհետեւ Փոքր Հայաստանի հայերը համեմա-
տաբար այնչափ արթնացած են և աչքաբաց,
որ գիտեն նոյնչափ օրէնսդրական կանոններով
իրանց իրաւունքները փաստաբանների ձեռքով
ատեանի առաջ պաշտպանել, որչափ Չմիւռնիա,
Կ. Պոլսի, Կիւստրիա կամ այլ մեծամեծ քաղաք-
ների մէջ, էլ չեմ խօսում զէնքով աւազակների
դէմ իրանց իրաւունքները պաշտպանելու վրա...
Չեղ երեւի յայտնի է, որ ամեն ու հինգ տա-
րիէ ի վեր թիւրքիւն մէջ մտցրած է իւր բո-
լոր բովանդակութեամբ ֆրանսիական օրինաց
կողմը, որի համեմատ Չմիւռնիայի կամ Կ.
Պոլսի մէջ արդարադատութեան պահանջները
կարելի է լինում լցուցանել: Բայց ու՞մ մեղքն
է, որ Մեծ Հայաստանի մէջ բաւական հասկա-
ցողութիւն չունենալով այդ օրինադրքերի և օ-
րէնքների վրա, թոյլ են տալիս դատաւորներին
օգուտ քաղել այդ տգիտութիւնից և վարվել նո-
ցա հետ կամայական կերպով:

Ուրեմն էլ առանց ժամանակ կորցնելու ան-
միջապէս դիմենք այն անելիքներին, որոնք վե-
րաբերվում են, մեր հայ ազգի անդամներին: Իսկ
մեր անելիքները հետեւեալում են կայանում. տա-
րածել Մեծ Հայաստանի վանի, Մուշի, Երզրու-
մի, Երզնկաեանի և Կիւրքէքիւրի վիլայէթներում
իրանց տէրութեան նոր օրինադրքերը հայոց տա-
ւերի և ընդունի փոխած: ուղարկել այդ տեղ շար-
ժուն փաստաբաններ, որոնք, տեղից տեղ պըտ-
տելով, ժողովրդին մի կողմից օրէնք սովորա-
ցեն, միւս կողմից ձրիաբար նոցա դատը պաշտ-
պանեն հայ և թիւրք հարստահարիչ վախճառու-
ների դէմ, և այսպիսով միտք ներշնչեն մեծ
հայաստանցի թէ նոքա էլ մարդ են և իրանց
քաղաքական և հասարակային իրաւունքների
վրա մտածելու հրաման ունեն իրանց տե-
րութիւնից: Շատացնել այդ կողմերը գիւղական
ուսումնարաններ, որովհետեւ տգիտութիւնից
տանջվողները քաղաքացի վախճառուները չեն,
այլ գիւղական ազգաբնակչութիւն: Հիմնել այդ
հարստահարված գիւղացիների համար ակցիօնե-
րական փոքրիկ դրամատոներ: Յետ ուղարկել
Մեծ Հայաստանից դուրս ապրող մօտ հարիւր
հազար բնաւանկիւր ժողովուրդը և նոցա հետ զը-
նել նոյնպէս մի քանի շարժուն փաստաբաններ,
նոցա քաշած հողային և տոկոսատուական զըր-
կանքները նայելու համար: Մասնազէտ մարդիկ
ուղարկել վերջապէս հայ ժողովրդի տնտեսական
և հասարակային վիճակը մասնագիտաբար ու-
սումնասիրելու և մեր դարմանելի միջոցները
ցոյց տալու համար, որպէս զի Հայաստանի հայ
ազգաբնակչութիւնը իր տնտեսական դրութեամբ
մի օր աւելի դաժան և վատթար գերութեան
մէջ չընկնէ Եւրոպայից եկող էկզիլանտատոր-
ների ձեռքին և այլն և այլն:

Ահա այսպիսի հարցեր են, որոնցով պիտի
պարագլուխը մենք, ստանալի ինքնավարութեան
պատրաստական աշխատանքներ կատարելու հա-
մար:
Ի նկատի ունենալով այս ամենը Ներսէս
պատրիարքը Մանգուսի Էֆէն Եփէն Եփէն իւր
բազիր պ. Փանոսեանի աշակցութեան արդէն
պատրաստել և տալիս թիւրքաց նոր կողմերի
հայերէն փոխադրութիւնը, որով կարելի լինի
մի քանի հազար հատ տպագրելով, տարածել
նոցա հայ ազգաբնակչութեան մէջ: Պ. Կարապետ
Փանոսեանի հէնց այս գործն էր, որի վրա խօս-
տացել էի ձեռք անցնել անգամներ տեղեկութիւն
տալ, երբ ներկայացրի ձեր ընթերցողներին այդ
անխնայ վաստակաւոր քսան տարուալ գործու-
նէութեան համառօտ նկարագրերը: Այսպիսի մի
մեծ գործ, ինչպէս մօտ երեք հազար էլ կո-
ղերս հայերենի փոխելը, որչափ էլ հակադական
լինի, բայց Փանոսեանի ուժը նորան էլ կը յաղ-
թէ, այստեղ խոնդուող միայն դրամն է, որով
կարելի լինի այդ գրքերը տպել տալ: Իսկ այս
մասին Ներսէս պատրիարքին ոչինչ ուրիշ միջոց
չը մնաց, բացի զիմեւ ուսումնային օգնու-
թեան, վասն որոյ երբ հարցրեց ինձ այն օրը
թէ ինչ մարդկներն դիմէ մօտ տաս հազար
րուբլ օգնութեան համար, ես մատնեցի նո-
րան երկու ունեւոր մարդկանց հայրենասիրու-
թիւնը, որոնց և զիմեց մեր ազգի պաշտելի
խնամակալը. երբ նորա պատուէրները կը կա-
տարվեն, պարտաւորութիւն կը համարեմ առան-
ձին ցուցակով ուղարկել ձեզ այն յարգելի ազ-
գայիների անունները, որոնք կը մասնակցեն
վերոյիշեալ գումարի հաշմարթման: Գործող է
Բայց դարձնելով իւրաքանչիւր հայի ուշա-

դրութիւնը այս ներքին աշխատանքների պրօզ-
րամի վրա, դորանով բնաւ երբէք չենք ուղում
ասել թէ մենք հէնց մի բոլոր պիտի դադարենք
Անգլիայի և Եւրոպայի եախան ձգագել հայոց
հարցի մասին, քան լիցի, մենք բնաւ չենք ու-
ղում այդ ասել, այլ ուղում ենք յայտնել այն
միայն թէ՛ մի կողմից դիմելով Եւրոպային,
պաշտպանելով հայոց դատը եւրօպական թեր-
թերի մէջ, սերտ յարաբերութիւններ ունենալով
Եւրօպական դիպլոմատներին և թղթակցների
հետ, մարդ, պատգամաւոր և ուղերձ ուղարկելով
Եւրօպական կարիւնտներին, խօսքով ամեն կերպ
ձայն և աղմուկ գցելով հայոց հարցի մասին,
մենք չը դադարենք նոյն էնէրգիայով աշխատել
ևս ներքին պատրաստութեան համար, որով
ինքնավարութեան համար նշանակված չորս-հինգ
վիլայէթները մի յատուկ եւրօպական յանձնա-
ժողով դալու ժամանակ, հարկաւոր բեֆօրմները
մտնելու համար, պատրաստ գտնէ ինքնավա-
րութիւնը ընդունելու:

Ահա մայս պիտի լինի մեր հոգացողութիւնը:
Վասն որոյ ուրիշ անգամ ևս կը խօսեմ Հա-
յաստանի ինքնավարութեան համար տեսե-
լի ն երբ ինչ պատրաստութիւն լինի ևս երի նը-
շանակութեան վրա, որոնցով պայմանաւորված է
Հայաստանի քաղաքական և հասարակային ին-
ական վերածնութիւնը:

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրներին վախճագոյնց հեռագրում են,
նոյեմբերի 8-ին հետեւաւ: Դատաստանական
քննութեան ժամանակ Կիւստի չը փոխել իր
վարմունքը: Նա առաջվա պէս անշափաւոր էր:
Նիստի ժամանակ սատարի ապաւորութիւն գոր-
ծեց Կարֆիլի ողնաշարի հետազօտութեան պատ-
մը: Կիւստի բանտը վերադարձնելու ժամա-
նակ, հրացան արձակեց նրա վրա ձիւս վրա նըս-
տած մէկ երիտասարդ մարդ, և թեթեւ կերպով
վիրաւորեց նրա ձեռքի յօդը: Այդ մարդը կա-
լանաւորված է: Կարծում են, որ այդ մարդը
խելագարված է:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Միացեալ-Նահանգներում, Պրովիդենսում, մեծ
հասարակութիւն է գրաւում մէկ հրէշ մարդ-արջ:
Այդ հրէշը մարդկային ցեղից է: Նրա անունը
Կալիփ Միֆալ է: Նրա հայրը Ֆրանսիացի և
մայրը իւրանդուսի է: Կեռ ևս մանուկ ժամանակ
նա այնքան տղեղ էր, որ նրան օտարներից
ծածկում էին: Երբ որ նա սկսեց մեծանալ, այն
ժամանակ ծնողները, նրանից աղաւթելու համար
տարան նրան մէկ վայրի մանտա և թողնելին
ձակատաղրի կամքին: Անտառային բնակիչ դառ-
նալով, նա ինտենսիւտ զօրութեամբ ընդունեց
զազանների բոլոր սովորութիւնները: Նա այժմ
գազան է և ոչ թէ մարդ: անդադար արջի նը-
ման մեռնում է, դէմքը ոչինչ խելք չէ արտա-
յայտում, թէպէտ բնի վերին մասը նոյնպիսի է,
ինչպէս ամեն մարդ ունի, բայց ձեռքերը և ոտ-
ները ուղիղ արջի են և ման է գալիս չորս ոտե-
րի վրա: Ամերիկական լրագիրները հաստատում
են, որ այդ հրէշը այնու ամեն ամենայնիւ չէ մոռա-
ցել մարդկային հակութեանը և մնացել է նրա մէջ
սէրը դէպի երաժշտութիւն, փողը և քաղցրեղէն-
ները:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳՈՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ
Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 17 նոյեմբերի: Երկա-
թուղու վերաբերեալ յանձնաժողովը Բարա-
նօվի նախագահութեամբ մէկ առանձին
խորհուրդ կազմեց, ճանապարհների պարա-
քերը վճարելու միջոցների հարցը բնական
եթէ անակաւ թիւն պատահի: «Новости»
լրագիրը հաղորդում է, որ Ֆինանսների
մինիստրութիւնը քննում է Ռուսաստանից
նաւթ դուրս տանելու արգելման նախա-
գիծը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արտասահմանից եկած մի վարպետ շինում է պատրաստ և գաթազով ընդունում է կտան ու լաւ քան թէ ուրիշներ, կենդանակերպ ծաղիկներով զանազան տեսակ գերեզմանական արձաններ: Հավաքար, Շիրաձխանայի վերի ծայրը, ապակեկայի կարգը № 32 խանութք:

7—15

Երաժշտական խանութում, որ գտնվում է Արծրունու գալլերայում, բնասութան մաս, երաժշտական իրերով առատորէ շուտով կրճատելու պատճառով, այս նոյնների 6-ից սկսած վաճառվում են սաստիկ արժան գներով նոսր, երաժշտական զործիքներ, ջութակներ, Ֆլեյտաներ, կըլարններ, վիոլոններ, գիտարներ և այլ երաժշտական վերաբերեալ իրեր բոլորուց մինչև 80 ԿՊԷԿ ԶԻՋՈՒՄՈՎ:

6—10

ԲԱԹՈՒՄԻ

ԿՕՄԻՍԻՕՆԷՐ

ԱՐՇԱԿ ԾԱՏՈՒՐԵԱՆՑ

Ընդունում է ամեն տեսակ պատուէրներ, յանձնարարութիւններ և ապագարանք:

14—20

Թէ՛Ց ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱԶՈՂՆԵՐԸ պէտք է գնեն ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ԹԷՅԼԻ լաւ տեսակի Փուշուր 1 ր. 20 Կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 Կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ ԹԻՖԼԻՍՈՒՄ, որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէ՛յի համեմատական ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ: Բացի այդ Անգլիական խանութը կըսում է ՄԱՔՈՒՐ ԹԷՅԼԻ առանց թղթի և ԱՐՃՃԻ:

84—100

ԲԷՍՏՈՐԱՆԸ

ԱՐՇԱԿ ԾԱՏՈՒՐԵԱՆՑ

Մի նոր տիրոջ ձեռքն անցնելով, ստացել է այժմ մի բոլորովին այլ և ԳԵՐԱՅԻՎ ՏԵՍԲ, ունի ընտիր ՃԱՇԵՐ և ԸՆԹԻՐԻՔՆԵՐ, նոյնպէս և լաւ ԽՄԻՉԳՆԵՐ: Գները շատ էժան են:

13—20

ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒԻ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ գասեր ընտանիքներում: ՀԱՐՑՆԵԼ "ՄԸՇԱԿԻ" խմբագրութեան մէջ:

ВЪ ЭРИВАНИ

Окончивший курсъ среднеучебнаго заведения даетъ уроки по всѣмъ предметамъ Гимназіи, а также по нѣмецкому и французскому языкамъ.

Узнать въ книжномъ магазинѣ Г. Гуламирянца.

5—5

Կուկիոյ սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ "Թանգրեան" ուսումնարանի վարչութիւնը յայտնում է, թէ նոյն դպրոցումը նշանակված է աճուրդ նոյեմբերի 22-ին առաւօտեան 10 ժամին, նոյն եկեղեցւոյ պատին 12 № կրպակները և սենեակները կապալաւ տալու համար:

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷՃԱՆ քան թէ ուրիշ տեղ. Թէ՛Ց, կակաօ, ՇՈՎՈԼԱԿ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բոխներ, թէյամաններ, սուրճօղներ, ՄԱՏՈՒՑԱՆՆԵՐ, երես լուանայու ամաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԶԳԵՍԱԿԱՆՆԵՐ, զգալներ, գանալներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, ճրպաններ, տետրաներ, մատիտներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԷՎՈԼՎԵՐՆԵՐ, մէջքակապներ, կլէճակ, թԱՄՔԵՐ, սանձեր, ութներ, ՄԱՀՃԱԿԱՆՆԵՐ, երեսբրիններ, թաշկինակներ, կանանց գուլաներ, մարգկերանց գուլաներ, տուարիտի սապոն, հոտաւէտ ջրեր, շերբետ, ցիտրան մագնեկա, խնայի գինի, պօրովէյն, խերես, կօնյակ և 1,000 այլ առարկաներ: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ՆՈՅՆ ՏԵՅԼԸ վաճառականներին: ՄԵՇ քանակութեամբ ծախվում է ԹԷ՛Ց. պուշուրով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆուշուրով 1 ր. 1 ր. 40 Կ., 1 ր. 20 Կ., 1 ր. 40 Կ., 1 ր. 60 Կ. և 1 ր. 80 Կ., իսկ ամենաբարձր թէյը ֆուշուր 2 ր. քաշը ԱՌԱՆՑ Թղթի:

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և 204-ԲՈՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., բէլգիկներ 4—34 ր., ԲՈՒԼԴՈԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շեֆիդի գանալներ 3 ր. 50 Կ. դիւժինը, պլոմներ կիսագնով, ֆիլտրաներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացանների և բէլգիկների թիֆլիսում:

52—100

Բ Ժ Շ Կ Ա Ն Ո Ց

Հիւանդների ընդունելութիւնը Թիֆլիսի քաղաքային բժշկանոցում լինում է 9—1 ժամը:

Ամենայն օր Թիֆլիսի քաղաքային բժշկանոցում ընդունում են հիւանդներին հետեւեալ բժշկները:

Հեղինակ 9—10 ժամը խրուրդիական, սիֆիլիտիական և կաշու հիւանդութիւնների: Գառնիէ ԼԵԿԵՎԷ ԼԻՍԻՆԳ 10—11 ժամը ներքին և ջրային հիւանդութիւնների: Գառնիէ ԼԵԿԵՎԷ ԼԻՍԻՆԳ 11—12 ժամը մանկաբարձական և կանանց հիւանդութիւնների: ԿՈՂՊԷՔՆԵՐ 12—1 ժամը սիֆիլիտիական և ներքին հիւանդութիւնների: Բացի այդ ԳՕՐԱԼԷՎԻԷ ԼԵԿԵՎԷՐԻՍ օրերը ներքին հիւանդութիւնների: ՄԻՆԿԵՎԻԷ ԼԵԿԵՎԷՐԻՍ օրերը 9—10 խրուրդիական հիւանդութիւնների: ՎԵՐԱՅԻԿ ԼԵԿԵՎԷՐԻՍ օրերը 10—11 ժամը ներքին հիւանդութիւնների: ԲԷՅԼԻ ԼԵԿԵՎԷՐԻՍ օրերը 10—11 ժամը աչքերի հիւանդութիւնների: ԲԱՐՏԻՎԷՎԻԷ ԼԵԿԵՎԷՐԻՍ օրերը 12—1 ժամը ծղալին և ներքին հիւանդութիւնների: ԲԻԼԷՐԵՆԵՆԿ 1-ին չորեքշաբթի օրերը 11—12 ժամը խրուրդիական, ականջի և բզալին հիւանդութիւնների և շարժ օրերը սիֆիլիտի միզային-սեռական օրգանների հիւանդութիւնների: ՏԱՐԽԱՆՈՎ ԵՐԿՈՂԱՐԹԻ, չորեքշաբթի և շաբաթ 11—12 ժամը ներքին հիւանդութիւնների: ԿԻՆԲԻՇԻՆԻՍ ԲՕՐԻՍԷՎԻԷ ԼԵԿԵՎԷՐԻՍ օրերը 12—1 ժամը կանանց հիւանդութիւնների:

Օրերիստ առաւի ցաւ ունեցողներին ընդունում է իր տանը ամեն ժամանակ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմարով: Ամեն օր բացի կիրակից բժշկանոցի մէջ լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար: Բժշկանոցի գրեկար:

Դ. Լիւկիչ

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ГАЗЕТУ

ДОНСКАЯ ПЧЕЛА

ГОДЪ СЕДЬМОЙ.

на 1882 годъ

Съ 1-го января 1882 года „Донская Пчела“ будетъ издаваться по той-же программѣ какъ издавалась въ предыдущіе шесть лѣтъ, два раза въ недѣлю.

Редакція, по мѣрѣ силъ и возможности выполняя обязанности провинціальной прессы, находитъ, что „Донская Пчела“ уже достаточно знакома публикѣ, почему и считаетъ всякія рекламы положительны излишними.

ПОДПИСНАЯ ЦѢНА ОСТАЕТСЯ ПРЕЖНЯЯ:

Съ доставкою въ Ростовъ н/Д.

Съ пересылкою иногороднимъ

На годъ..... 6 руб.	На годъ..... 7 руб.
> 1/2 года..... 3 „ 50 к.	> 1/2 года..... 4 „
> 3 мѣсяца..... 2 „	> 3 мѣсяца..... 2 „ 50 к.

За перемѣну адреса редакція взимаетъ 25 коп.

Подписка принимается въ конторѣ редакціи „Донской Пчелы“ въ Ростовѣ на-Дону, на Большой Садовой улицѣ, въ домѣ И. А. Теръ-Абрамянъ. Иногородніе благоволятъ адресоваться: въ редакцію „Донской Пчелы“ въ Ростовъ на-Дону.

Редакція покорнѣйше проситъ и иногороднихъ подписчиковъ присылать свой требованія заблаговременно, написавъ свои полные адреса четко разборчиво.

Всѣмъ годовымъ подписчикамъ, приславшимъ до 25-го декабря сего 1881 года подписныя деньги за 1882 г., будетъ разосланъ БЕЗПЛАТНО, въ видѣ преміи, „ДОНСКИЙ-АЗОВСКИЙ“ русско-армянскій календарь на 1882-й годъ.

Редакторъ-издатель И. А. Теръ-Абрамянъ

3—3

ԿԱՐԻ ԵՒ ՁԵԻԻ ուսուցիչ ԳՐԻԳՈՐ և ՇՈՒՇԱՆԻԿ ԱՆԵԱՆՑՆԵՐԸ Ասպրիտայի վերադառնալով Տիֆլիս, կամենում են կանանց և երեխայից հաղուստների ԿԱՐԵԼ և ՁԵԻԵԼ ՍՈՎՈՐԵՑՆԵԼՈՒ համար ԱՐՃԵՍԱՆՈՑ բաց անել, եթէ աշակերտահիւնների թիւը 15-ի հասնի: Աշակերտահիւն կարող են լինել և ՏԻԿԻՆՆԵՐ: Առհասար կաւանդուի ՄԱՅՐԵՆԵՐ լիզուով:

Սովորելու պայմաններին տեղեկանալ ցանկացողները թող բարեհաճեն դիմել Գ. ԱՆԵԱՆՑԻՆ Կուկիայ, ՄԻՔԱՅԵԼԵԱՆ փողոց տուն № 27 որտեղ ընդունում են ԿԱՐԵԼ և ՁԵԻԵԼ ՍՈՎՈՐԵՑՆԵՐԻ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ: Անհանցները աւելացնում են և այս օր իւրեանց արհեստանոցում սովորած ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԸ ամենազատ կերպով կարող են ըմբայելի ու պարկայում ՀԱՐՑԱՔՆԵՆՈՒԹԻՒՆ բռնել:

1—3 (2)

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԷԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջին փողոցում կատարկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈԳՈՍՅԱՆԻ պահեստում:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցեով. Թիֆլիս, Михаилу Н. Теръ-Никогосову.

107—150

ОБЪ ИЗДАНИИ

въ 1882 году въ г. Тифлисъ еженедѣльнаго юридическаго журнала

ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ

(ГОДЪ ВТОРОЙ)

Журналъ, какъ и въ 1881 году будетъ выходить по ЧЕТВЕРГАМЪ, въ размѣрѣ до 2-хъ печатныхъ листовъ текста кромѣ приложений, по прежней программѣ, въ объемъ которой входятъ статьи по всѣмъ вопросамъ, вытекающимъ изъ теоріи и практики права и судопроизводства, перечень, изложеніе и обсужденіе важнѣйшихъ распоряженій и узаконеній правительства, краткіе отчеты (а въ случаяхъ важныхъ, и стенографическіе) о выдающихся судебныхъ дѣлахъ, особенно интересныя гражданскія рѣшенія, случаи изъ судебной жизни и практики (сѣтъ) корреспонденціи юридическаго содержанія, городская хроника, перечень новыхъ книгъ юридическаго содержанія и обзоръ печати, тезисы касационныхъ рѣшеній: Правительствующаго Сената и Тифлиской Судебной Палаты, судебный указатель и пр.

Забывая о посильномъ выполненіи своей программы, журналъ заручился сотрудничествомъ, сверхъ многихъ лицъ судебного вѣдомства, также и нѣкоторыхъ профессоровъ—юристовъ.

Редакція журнала Тифлисъ, Ново-Бebutовская ул., д. № 6.—Администрація (для приѣма подписки, объявленій и розничной продажи)—Тифлисъ, Соловьевская ул., д. № 10.—Подписная цѣна на журналъ, съ доставкою и пересылкою, на годъ—10 р. на 9 мѣс.—8 р. 20 к., на 6 мѣс.—6 р., на 3 мѣс.—3 р. 20 к., на 1 мѣс.—1 р. 20 к. Разсрочка въ платежѣ денегъ—по соглашенію съ администраціею журнала. Подписаться можно съ 1-го числа каждаго мѣсяца, и не далѣе конца года.—Отдѣльныя номера—по 25 к.—Объявленія, казенныя и частныя, по таксъ за занимаемое мѣсто.—Иногородныхъ проситъ обращаться исключительно въ Администрацію журнала.

Издатель А. Френкель, присяжный повѣренный.

Редакторъ А. В. Степановъ

3—3